ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 10 » հոկտեմբեր 2025թ. No 6228 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության արդյունավետության, և որակի գնահատման N 01/4894-25 առ 07.10.2025թ. և 01/4957-25 առ 09.10.2025թ փորձագիտական եզրակացությունները.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերագրանցման ընթացակարգով գրանցել թվով 3 դեղ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ ավելացնելով վերագրանցման մասին տվյալները:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի վերագրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի հոկտեմբերի «10» - ի N6228 - Ա հրամանի

Վերագրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ	Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը
1	Սալբուտամոլ	սալբուտամոլ (սալբուտամոլ սուլֆատ)	ցողացիր շնչառման, դեղաչափավորված	100մկգ/դեղաչափ; 200 դեղաչափ (12մլ) ալյումինե տարա ցողացիր սարքով	Գլաքսո Ուելքոմ Պրոդուկտիոն, Ջոն Ինդուստրիել 2, Լավուազիե 23 փ., 27000 Էվրյո	Ֆրանսիա	ԼաբորատոիրեԳլաքսոՍմիթԿլայն, 100, ռուտ դե Վերսալ, 78163 Մարլի-Լե-Ռուա սեդեքս	Ֆրանսիա	Դ	23502 06.10.2025	09.01.2025
2	Կլինդամիցին ԱԲՌ 600մգ դեղապատիճներ, կոշտ	կլինդամիցին (կլինդամիցին հիդրոքլորիդ)	դեղապատիճներ կոշտ	600մգ; (12/2x6/) բլիստերում	Բալկանֆարմա-Ռազգրադ ԱԴ, 68 Ապրիլսկո Վաստանիե բուլվար, 7200 Ռազգրադ	Բուլղարիա	Անտիբիոտիկ-Ռազգրադ ԱԴ, 68, Ապրիլսկո վաստանիե բուլվար, Ռազգրադ, 7200	Բուլղարիա	Դ	23503 06.10.2025	11.12.2025
3	Սիլդենաֆիլ	սիլդենաֆիլ (սիլդենաֆիլի ցիտրատ)	դեղահատեր թաղանթապատ	100մգ; (4/1x4/) բլիստերում	ՌԵՊԼԵԿ ՖԱՐՄ ՍՊԸ. Սկոպյե, Կոզլե փ. 188, 1000 Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Էսկուլապ ՍՊԸ, 17/2, 1-ին զանգված, Դավիթաշեն, 0054, Երևան	Հայաստանի Հանրապետություն	Դ	23504 06.10.2025	08.07.2025